

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր, փ.գ.դ.,
Ֆ.մ.գ.թ, պրոֆեսոր



Պ.Ս. Ավետիսյան

«08» դեկտեմբերի 2025թ.

Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ա Ր Ծ Ի Ք

Քնորգ Վարդանի Բարսեղյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը» վերտառությամբ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և լրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ստենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում իրականացված քրեաիրավական բարեփոխմամբ, որն ավարտվել է նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ և, մասնավորապես, որակապես նոր մոտեցմամբ և քրեական պատասխանատվությունը (նախկինում՝ արարքի հանցավորությունը) բացառող հանգամանքների համակարգի վերաիմաստավորմամբ: Կատարված փոփոխություններից է դարձել սույն ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող հարցի մասնակի ամրագրումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ: Քրեական օրենսդրության մեջ այնպիսի ինքնուրույն հանգամանքի առկայությունը, որը բացառում է այն անձանց քրեական պատասխանատվությունը, ովքեր համագործակցում են ՕՀԳ իրականացնող մարմինների հետ, կամ հենց իրենք՝ ՕՀԳ իրականացնող անձինք, խիստ հիմնավորված է առաջին հերթին այն պատճառով, որ հանգամանքների ներկայիս համակարգը չի կարող համարժեք և համապարփակ քրեաիրավական գնահատական տալ նման սոցիալապես օրինական գործողություններին: Նշվածը նշանակում է, որ անձի քրեական պատասխանատվությունը բացառող այս կամ այն հանգամանքը կամ չի կարող հիմնավորել անձի քրեական պատասխանատվության բացակայությունը, կամ նման հիմնավորումը չափազանց "թույլ" և ստեղծված իրավիճակին ոչ համարժեք կլինի:

Մինչդեռ հանցավորության ներկա վիճակը, երբեմն հանցավոր ոտնձգությունների կատարման հայտնաբերման և կանխարգելման միջոցների սահմանափակությունը անհրաժեշտություն են առաջացնում օպերատիվ-հետախուզական գործունեության

գինանոցում գտնվող այլ միջոցների, այդ թվում՝ ոչ քրեաիրավական բնույթի լայն օգտագործման անհրաժեշտություն: Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում իրականացվող միջոցառումների ներուժը մի շարք ծանր և սուսանձնապես ծանր, հատկապես լատենտության բարձր աստիճանով բնութագրվող կամ հանցավոր կազմավորումների կազմում կատարվող հանցագործությունների բացահայտման և կանխարգելման գործում դժվար է գերազնահատել:

Նշված համաստեքստում խիստ կարևոր է ՕՀԳ իրականացնող կամ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձի իրավաչափ վարքագծի հնարավոր ձևերի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Մի շարք օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում, ինչպիսիք են, օրինակ, օպերատիվ ներդրումը, տարբեր հանցավոր խմբերի կազմում ներդրված անձինք, ձեռք բերելով այսպես կոչված "թվացյալ հանցակիցների" կարգավիճակ, ստանձնելով մի շարք "քրեական/կրիմինալ պարտականություններ" (օրինակ՝ նախապես չխոստացված թաքցնելը, հանցավոր ճանապարհով ակնհայտ ձեռք բերված գույքի ձեռքբերումը), որոնց կատարումն անհրաժեշտ է հանցավոր խմբի առաջնորդների վստահությունը շահելու և բացահայտման հնարավորությունը նվազեցնելու նպատակով, կարիք ունեն պատշաճ քրեաիրավական պաշտպանության: Օպերատիվ ներդրման դեպքերն անխուսափելիորեն ենթադրում են ներդրված անձի կողմից խմբի կազմում այլ անձանց հետ միասին քրեաիրավական պահպանության տարբեր օբյեկտների վնաս պատճառելը, ինչն էլ համանման է դարձնում հանցակցության ինստիտուտը և օպերատիվ ներդրումը:

Այսպիսով, իրականացված հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է համալիր գիտական հետազոտություն, որն ունի միջճյուղային բնույթ և նվիրված է ՕՀԳ ծառայողների և ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց քրեական պատասխանատվության բացառման ինստիտուտի վերլուծությանը՝ օպերատիվ-հետախուզական և քրեական օրենսդրության դրույթների կիրառման պրակտիկայի օպտիմալացմանը և հանցավորության դեմ պայքարի տվյալ միջոցի ներուժի առավել լայն օգտագործմանը նպաստող գիտականորեն հիմնավորված առաջարկությունների նպատակով:

Հարկ է նշել, որ իրականացված հետազոտության նշանակությունը բարձրացվում է էմպիրիկ հարուստ բազայով և Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայի նյութերի մանրակրկիտ վերլուծությամբ, ինչը թույլ է տալիս հետազոտվող հարցի

կարգավորման առկա բացերին նայել "ներսից" և առաջարկել դրանց առավել համարժեք լուծում:

Հեղինակը լավ է բացահայտել ընտրված թեմայի գիտական մշակվածության աստիճանը, օգտագործվել է մեծ քանակությամբ գիտական և ուսումնական գրականության, ինչը վկայում է Գ.Բարսեղյանի կողմից իր հետազոտության թեմայի հետ կապված հարցերի համընդգրկուն դիտարկման մասին: Պետք է նշել հեղինակի գրագետ կոչը տարբեր գիտնականների տեսակետներին՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու համար, ինչպես նաև կոռեկտ պոլեմիկա գիտության մեջ առկա այլ դիրքորոշումների հետ:

Ուշադրության է արժանի հեղինակի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի նոր խմբագրության առաջարկը, որտեղ անհրաժեշտ է նշել հեղինակի կողմից առաջարկվող մի շարք առանցքային և սկզբունքային նորամուծություններ: Այսպիսով, նախ և առաջ, հեղինակը միանգամայն իրավացիորեն առաջարկում է այս նորմի գործողությամբ ընդգրկել ոչ միայն այն անձանց, ովքեր համագործակցում են ՕՀԳ իրականացնող մարմինների հետ՝ դրանով իսկ օգտագործելով "օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ" տերմինը:

Հաջորդ մեկ այլ կարևոր հարց, որին անդրադարձել է հեղինակը՝ անձի քրեական պատասխանատվության հարց է այն դեպքում, եթե նա սադրանք է կատարել օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման ընթացքում: Հեղինակը միանգամայն իրավացիորեն մատնանշում է այն դեպքերը, երբ սադրանքը կարող է ճանաչվել օրինական և թույլատրելի, ինչը համապատասխանում է հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման շահերին և նպատակներին:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 7 հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճարկելի դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Մասնավորապես.

1. Հեղինակը 98-րդ էջում մակերեսորեն բարձրացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում վնաս պատճառելու իրավաչափության սահմանները գերազանցելու հարցը՝ արտահայտելով այն միտքը, որ այս պնդումը տեղին չէ: Մինևույն ժամանակ, կարելի էր ավելի մանրամասն անդրադառնալ դեպքերի վերլուծությանը և "ավելի լոյալ"

վերաբերմունքին այն անձանց նկատմամբ, ովքեր ստեղծված իրավիճակի էքստրեմալության, բացահայտվելու վախի, հուզմունքի հետևանքով ավելի մեծ վնաս են պատճառել, քան կանխվածը, կամ էլ տվյալ կոնկրետ իրավիճակում չեն կարողացել գիտակցել, որ կարելի է հանցավոր խմբում պահպանել իրենց՝ «վստահությունը»՝ առանց կյանքի և առողջության դեմ հանցագործություն կատարելու:

2. Չնայած կատարված հետազոտության կարևորությանը և այն փաստին, որ այն, ընդհանուր առմամբ, ունի գիտական նորույթ, այնուամենայնիվ, պաշտպանությանը ներկայացվող առաջին դրույթը չի պարունակում գիտական նորույթ: Այսպես, այդ դրույթը արդեն իսկ ամրագրված է Գ.Ս. Շկաբինի «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովում. տեսական, կիրառական և օրենսդրական ասպեկտներ»՝ ատենախոսության պաշտպանության ներկայացվող առաջին դրույթում:

3. Հեղինակի կողմից առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, որի 2-րդ մասը պետք է ունենա հետևյալ խմբագրությունը. օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի դեմ ուղղված ավարտված հանցանք, առողջության դեմ ուղղված ծանր կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ պարզ չէ, թե ինչպիսի չափորոշիչների հիմնան վրա է հեղինակը ընտրել հանցագործությունների շրջանակը, որոնց կատարման դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության: Մասնավորապես, պարզ չէ, թե ինչու է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի մարդու դեմ ուղղված հանցանքներից նախապատվություն տրվել սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանքներին, իսկ, օրինակ, ազատության դեմ ուղղված առանձնապես ծանր հանցանքները դուրս են մնացել հեղինակի կողմից մատնանշած շրջանակներից:

Ամփոփելով վերոգրյալը, հարկ է արձանագրել, որ նշված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում կատարված հետազոտության նշանակությունը:

Հետևություն. Գևորգ Վարդանի Բարսեղյանի «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը» վերստառությամբ ատենախոսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն, ավարտուն, տեսական և պրակտիկ նշանակություն ունեցող, գիտական նորույթ պարունակող հետազոտություն, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, և դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ժԲ.00.05 –«Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական
և քրեադատավարական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ 3. Մ. Զոհրաբյան

Հաստատում եմ՝
ՀՌՀ գիտքարտուղար,

